ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-27-Ը ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան), 2020թ. դեկտեմբերի 25-27

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
Գործուղումը կայացել է երկուստեք ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
Գործուղման նպատակն էր՝
- «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» պայմանագրի ժամկետների երկարացման, փոխանակման ծավալների ավելացման և գործակիցների հետ կապված հարցերի քննարկում,
- Իրան–Հայաստան III էլեկտրահաղորդման գծի վարկային համաձայնագրի երկարացման շուրջ բանակցություններ,
- Երևանի ՋԷԿ–ի և իրանական «Թավանիր» ընկերության միջև հաշվառման հետ կապված խնդիրների քննարկում:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
Նիստի ընթացքում քննարկվել են Հայաստան – Իրան էներգետիկ համագործակցության խորացման փոխշահավետ գործընթացին նպաստող հարցեր, ներկայացվել է գազ-էլեկտրաէներգիա փոխանակման համաձայնագրի փոփոխությունների վերաբերյալ երկու կողմերի առաջարկությունները, և այս առումով գրանցվել է դրական դինամիկա, որին գործնականում հնարավոր կլինի հասնել մոտակա ժամանակներում:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած այցի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Իրանի նավթի նախարարի միջազգային ու առևտրական հարցերով տեղակալ Ամիր Զամանինիայի, ԻԻՀ նավթի նախարար Բիժան Զանգանեի, ԻԻՀ էներգետիկայի փոխնախարար Հոմայուն Հաերիի և Իրանի արտահանման և զարգացման բանկի տնօրեն Ալի Սալեհաբադի հետ: Այս հանդիպումների ընթացքում քննարկվել են հայ-իրանական համատեղ տարբեր ծրագրերի իրականացմանն առնչվող մի շարք հարցեր, ներկայացվել է առկա փոխգործակցությունն ընդլայնելուն ուղղված առաջարկներ և ձեռք են բերվել հեռանկարային կարևոր պայմանավորվածություններ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

- Ստորագրված փաստաթղթի համաձայն Վարկային համաձայնագիրը երկարացվում է մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը:
- Քննարկվել են Երևանի ՋԷԿ և իրանական Թավանիր ընկերությունների միջև հաշվառման հետ կապված հարցերը և պայմանավորվածություն է ձեռք բերվել կարգավորման ուղղությամբ:
- Գազ-էլեկտրաէներգիա պայմանագրի առանցքային կետերի շուրջ եղել են պայմանավորվածություններ, որոնց ուղղությամբ կողմերը աշխատում են, և վերջնական տեքստը մոտակա ժամանակներում պատրաստ կլինի:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ակնկալվում է, որ 2021թ. հունվար-փետրվար ամիսներին կվերջնականացվի «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» պայմանագրի փոփոխված տարբերակը:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

28.12.2020թ.